

## ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՄՔ Երկուշաբթի, 23 Յունիսի, 2008

Հինգշաբթի, Յունիսի 19-ին տեղի ունեցաւ Միացեալ Նահանգների Սենատի արտաքին յարաբերութիւնների հարցերով յանձնաժողովի ունկնդրութիւնը, որի ընթացքում քննարկուեց Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպանի պաշտօնում Մարի Եովանովիչի թեկնածութեան հարցը: Իր բացման խօսքում Մարի Եովանովիչը չօգտագործելով «ցեղասպանութիւն» բառը նշեց, թէ,- մէջբերում ենք,- «Միացեալ Նահանգները եւ անշուշտ ես, հաստատում եւ ցաւում ենք, որ մէկ ու կէս միլիոն հայեր ենթարկուեցին զանգուածային սպանութիւնների, ցեղային մաքրագտումների եւ բռնի տեղահանութիւնների՝ Օսմանեան կայսրութեան վերջին ժամանակահատուածում»: Մարի Եովանովիչի տոյն արտայայտութիւններից յետոյ Սենատոր Ռոբերտ Մենենդէզը, որի անկոտրում ջանքերով անցեալ տարի դուրս դրուեց Հայոց Ցեղասպանութեան փաստն ուրացող Ռիչըրդ Հոգլանդի նոյն պաշտօնում թեկնածութիւնը, վկայակոչելով Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարութեան արխիւում պահուող փաստաթղթերը, մասնաւորաբար դեսպան Հենրի Մորգնթաուի վկայութիւնները, բուռն հարցումներ ուղղեց Մարի Եովանովիչին՝ Հայոց Ցեղասպանութեան փաստն ընդունելու կապակցութեամբ: Թեկնածու Եովանովիչը շրջանցելով հարցերը, նշեց, որ իր համոզմամբ Միացեալ Նահանգների նախագահն ու արտաքին գործերի նախարարութիւնն են, որոնք քաղաքականութիւն են որդեգրում պատմական իրադարձութիւնների պարզաբանման ու հաստատման վերաբերեալ: Այդուամենայնիւ, Սենատոր Մենենդէզը շեշտեց, որ Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպանի պաշտօնը վարող անձի համար խիստ կարեւոր է ճանաչել Հայոց Ցեղասպանութեան փաստը: «Ամէն տարի, Ապրիլի 24-ին, Հայաստանում մեր դեսպաններին ուղարկում ենք Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ ոգեկոչելու համար Հայոց Ցեղասպանութիւնը, այնուամենայնիւ, մենք վարանում ենք Հայաստան ուղարկել այնպիսի անձի, որը պիտի Հայոց Ցեղասպանութիւնը ցեղասպանութիւն անուանի»,- ասաց Սենատոր Մենենդէզը եւ յոյս յայտնեց, որ Հայաստան գործուղուող Միացեալ Նահանգների յաջորդ դեսպանը պիտի կարողանայ անվարանօրէն խօսել ճշմարտութեան մասին եւ ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը: Սենատի արտաքին յարաբերութիւնների հարցերով յանձնաժողովի ունկնդրութեանը ելոյթ ունեցաւ նաեւ նիստը նախագահող Սենատոր Բէն Քարդինը, որը յայտարարեց, թէ,- իր բառերով,- «Ինձ համար անառարկելի է այն, որ պերճախօս են փաստերը, իսկ հայերի դէմ կատարուածը ցեղասպանութիւն էր: Հայաստանում մեզ անհրաժեշտ է ունենալ այնպիսի մի դեսպան,- ասաց նա,- որը հասկանում եւ ճշգրտօրէն արժեւորում է պատմական իրողութիւնները»: Ակնկալուում է, որ Մարի Եովանովիչի թեկնածութեան վերաբերեալ յանձնաժողովի քուէարկութիւնը տեղի կունենայ առաջիկայ օրերին:



Շաբաթ, Մայիսի 31-ին տեղի է ունեցել Արիզոնայի Նահանգի Ֆինիքս քաղաքի Նոր Հայ Կենտրոնի բացման արարողութիւնը, որին ներկայ են գտնուել շրջանի հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչներն ու համայնքի անդամները: Վարձուած Նոր կենտրոնում կը շարունակեն գործել Բ.Յ.Դ. «Գեորգ Չաուշ» կոմիտէն, Հայ Օգնութեան Միութեան «Արարատ» մասնաճիւղը, Բ.Մ.Ը.Մ.ի Ֆինիքսի մասնաճիւղը, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Գետաշէն» ուխտը, ինչպէս նաեւ շաբաթօրեայ վարժարանը: Խօսք առնելով բացման արարողութեանը հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչները շեշտեցին, որ կենտրոնի հիմնական առաքելութիւնն է լինելու ծառայել հայապահպանման գործին եւ Նոր սերնդին դաստիարակել հայ հոգով: «Ձուլուման դէմ մեր պայքարը պիտի շարունակենք. բոլորս միասին պիտի պայքարենք, որպէսզի թոյլ չտանք որ մեր թշնամու երազը իրականանայ: Այսօր պիտի հզօրացնենք Սփիւռքը, որովհետեւ ունենք ազատ ու անկախ հայրենիք, մեր հայրենիքի սիրոյն համար պիտի գոյատեւենք, որպէսզի հզօրանանք եւ հզօրացնենք մեր չքնաղ Հայրենիքը»,- միջոցառմանը յայտարարել է ՀՕՄ-ի շրջանային վարչութեան ներկայացուցիչ՝ Սոնիա Փելթքեանը :



Գլենդելում գործող Հայ կրթական հիմնարկությունը շարունակում է իր նպաստը բերել Լոս Անջելոսի UCLA համալսարանի Արդի հայոց պատմության ամբիոնի աշխատանքներին: Արդարեւ, հիմնարկությունը 50,000 դոլար է նուիրել ամբիոնի վարիչ դոկտ. Ռիչըրդ Յովհաննեսեանի գլխավորած Հայոց Եղեռնի վերապրողների վկայությունների արձանագրության ծրագրին: Նշենք, որ 1950 թուականից ի վեր, Հայ կրթական հիմնարկությունը ուշագրավ օժանդակություններ է կատարել հայկական կրթօջախներին, օգնության հասնելով հարիւրաւոր հայ աշակերտների ու բազմաթիւ դպրոցների ուսումնական կարիքներին:



Արեւմտեան Ամերիկայի Ազգային վարժարանների Խնամակալ մարմնի հովանավորութեամբ, Լոս Անջելոսի դատախազի նախկին տեղակալ Սէնդի Պետրոսեանը այցելել է Էնսինոյի «Ֆերահեան», Յոլիվուդի «Ռոզ Եւ Ալեք Փիլիպոս» եւ Մոնթբելլոյի «Մեսրոպեան» միջնակարգ վարժարանները, ուր ելոյթներ է ունեցել աշակերտների համար, արծարծելով քրեական օրենքի էական հարցերը եւ դատաիրաւական համակարգի սկզբունքները Միացեալ Նահանգներում: Սէնդի Պետրոսեանը տեսաներիզների ցուցադրութեամբ, ամերիկահայ երիտասարդներին իրազեկ է պահել այնպիսի յանցագործութիւնների դատաիրաւական հետեւանքների մասին, ինչպիսիք են վայրագ յարձակումները, անուշադիր մեքենավարութիւնը, գողութիւնը, խափանարարական արարքները, եւ թմրանիւթեր կրելու դեպքերը: Աշակերտները գոհունակութիւն յայտնելով իրաւական սոյն տեղեկութիւնների համար, ցանկութիւն են յայտնել, որ յաճախակի դառնան նման հանդիպումները:



Կիրակի, Յունիսի 15-ին Նշուել է Նեւադայի նահանգի Լաս Վեգաս քաղաքի փոքրաթիւ հայ համանքի վերակազմութեան երկրորդ տարեդարձը՝ կրօնական եւ ժողովրդական արարողութիւններով ու հանդիսութիւններով, որոնց ներկայ են գտնուել թեմակալ առաջնորդ Մուշեղ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, ազգային մարմինների ներկայացուցիչները եւ համանքի անդամները:

Այս լուրերը տրամադրում են  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: